ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

/ 01.01.2019թ-31.12.2019թ/

2020 թվականի փետրվարի 07-ին Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարի 2019 թվականի տարեկան հաշվետվությանը ներկա էին մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Արսեն Ղուկասյանը, համայնքի ավագանու անդամներ, դպրոցի, մանկապարտեզի, համայնքապետարանի աշխատակիցներ և համայնքի թվով 32 բնակիչներ:

ՀՀ Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

01.01.2019թ- 31.12.2019թ ընթացքում համայնքապետարան է դիմել 132 բնակիչ , դիմումատերերի հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Համայնքապետարանը , համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում, կադաստրային տարածքային ստորաբաժնում:

Համայնքում տարվա ընթացքում կայացել է ավագանու 11 նիստ,ընդունվել է 42 որոշում, որոնք ներկայացվել են մարզպետարան: Համայնքի կողմից կայացվել է տարբեր բնույթի 82 որոշում, 46 կարգադրություն,որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան: Ընթացիկ ժամանակահատվածում համայնքապետարանը ստացել է 260 գրություն, հղվել է 288 պաշտոնական գրություն, բնակիչներին տրվել է 363 տեղեկանք:

2.Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի նախագիծը, տնօրինել է համայնքի 2019թվականի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1. Հողի հարկ	12758.6 հազ. դրամ
2. Գույքահարկ	8109.1հազ. դրամ
3. Գույքի վարձ. վճար	1140.0 հազ. դրամ
4. Դոտացիա	46722.5 հազ.դրամ
5. Տարեսկզբի ազատ մնացորդ	13239.5հազ. դրամ
6. Հողի վարձ. գումար	266.3 հազ.դրամ
7. Տեղական տուրքեր	90.0 հազ.դրամ
8. Տեղական վճար	2269.9 հազ.դրամ
9. Հողի օտարումից մուտքեր	1031.3 հազ. դրամ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1.Տեղական ինքնակառավարում	25113.2 հազ. դրամ
2.Համայնքային այլ ծառայություն	866.0 հազ. դրամ
3.Կրթություն և մշակույթ	5424.0հազ. դրամ
4. Սոց. օգնություն	2760.0հազ. դրամ
5. Այլ մշակութային ծառայություններ	1297.6հազ. դրամ
6. Նախադպրեցական ուսուցում	15880.0հազ. դրամ
7.աղբահանություն	1910.8 հազ. դրամ
8. Առողջապահություն	188.2 հազ.դրամ

9. Ջրամատակարարում 19511.0հազ.դրամ

10. Գյուղատնտեսություն 370.0հազ.դրամ

11. Փողոցների լուսավորություն 649.8 հազ. դրամ

Համայնքապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

3.Պաշտպանության բնագավառում

Համայնքապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է ,որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

Հատուկ ուշադրություն է դարձվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

4.Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

:

Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

5.Կոմունալ տնտեսություն և բարեկարգման բնագավառում

Առավել մաքուր և հրապուրիչ շրջակա միջավայրով համայնք ունենալու համար հետևողական իրականացվում են աղբահանության աշխատանքները,որի համար համայնքապետարանը հատկացրել է 1910.8հազ. դրամ, Կատարվել է համայնքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգման աշխատանքներ ,որի նպատակով ծախսվել է

649.8 հազ. դրամ: Համայնքի անխափան ջրամատակարարման համար՝ վերակառուցվել է խմելու ջրի ջրագիծը, որի համար համայնքապետարանը հատկացրել է 15000.0 հազար դրամ՝ շինարարական աշխատանքների համար և 4000.0հազ. դրամ ջրաչափերի ձեռք բերման համար: Կատարվել է կոյուղագծերի վերանորոգման աշխատանքներ:

:

6.Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցման համար 2019թ. համայնքապետարանը հատկացրել է 15880.0հազ.դրամ մանկապարտեզին՝ աշխատավարձ, սնունդ և այլ ծախերի համար,համայքապետարանը ֆինանսավորել է մանկապարտեզի տանիքի մի մասի վերանորոգվման համար:

Համայնքում ապահովվել է մասայական միջոցառումների կազմակերպումը, նպաստել է ավանդական մշակույթի պրոպագանդմանը: Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ Մարտի 8-ի,Ապրիլի 24-ի, Մայիսի 9-ի, , դպրոցի շրջանավարտների, երեխաների պաշպանության օրվա, մանկապարտեզի հանդեսի , սեպտեմբերի 1-ի, Նոր տարվա կապակցությամբ:

Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ, համայնքապետարանի կողմից առաջին դասարանցիների նվերների համար հատկացվել է 150.0 հազ. դրամ: Ամանորի կապակցությամբ համայնքի 400 երեխաներին հատկացվել է 560,0 հազ. դրամ արժողությամբ նվերներ, կազմակերպվել է միջոցառում,որի համար ծախսվել է 197,0 հազ. դրամ:

7.Սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Համայնքի բնակչությանը, սոցիալապես անապահով խավին, ժամանակավոր անաշխատունակության դեպքում , տրվել է ֆինանսական աջակցություն:

Համայնքապետարանը աջակցել է երիտասարդական ընտանիքներին, զորացրված և զորակոչված զինծառայողներին տրամադրել է միանվագ դրամական օգնություն: Տրամադրված օգնությունների գումարը կազմել է 2760.0 հազ. դրամ:

8.Գյուղատնտեսության բնագավառում

Համայնքն ունի զարգացած գյուղատնտեսություն, ապահովվում է անասնաբուժական ծառայություններ՝ իրականացնում է անասնահամաճարակային միջոցառումներ, որի համար հատկացվել է 370.0 հազ. դրամ:

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքաշրջանառության, պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի, առկա գյուղտեխնիկայի վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

9.Առողջապահության բնագավառում

Համայնքապետարանը աջակցում է առաջնային բուժօգնության ծառայությանը՝ամբուլատորիան ապահովվում է ջրամատակարմամբ, էլեկտրա և գազամատակարամամբ, որի համար հատկացրել է 188.2 հազ. դրամ:

Հիմնախնդիրներ

Առատաշեն գյուղի հիմնական հիմնախնդիրներն են՝

1. Համայնքի էլեկտրոէներգիայի մատակարարաման համակարգի վերակառուցումը:
2. Համայնքում կոյուղագծի կառուցում:

Համայնքի ղեկավար՝ Վ.Հարությունյան

07 փետրվարի 2020Թ.